ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ք. Հրազդան 02.11.2022թ. ժամը 14^{00}

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կարիքների համար <<ԿՈՏ-ԳՀԱՇՁԲ-2022/4>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ստեփան Բաղդասարյան- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական

Անդամներ՝

Կարեն Հունանյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Հրաչյա Վարդանյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

Սեդա Բաղդասարյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Էմմա Գևորգյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Հասմիկ Հակոբյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության պետ

ՕՐԱԿԱՐԳ՝

1.Հայտերի բացման վայրը, օրը, ժամը.

<<ԿՈՏ-ԳՀԱՇՁԲ-2022/4>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի միջոցով ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք հասցեում, 2022թ. նոյեմբերի 02-ին, ժամը 14^{00}:

2. Գնվելիք աշխատանքի անվանումը և գնման գինը.

Չափաբաժինների համարները	Չափաբաժինների գնման գինը	Չափաբաժնի անվանումը
1	48149500	<<Բջնիի Հովհ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի վերակառուցման աշխատանքներ

Գնման գործընթացն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն	ՀՎՀՀ
1	<<ՔՐՈՍՍ>> ՍՊԸ	ք.Երևան,Գրիբոյեդովի 60/6	00150507
2	<<ԱՎԱԳ-ՇԻՆ1>> ՍՊԸ	Հրազդան, Քաղսի գյուղ 4 թղմ 88	03024889

3	<<Քոնստրաքշն Գրուպ>> ՍՊԸ	ք.Արտաշատ, Շահումյան փ. 12/21	04235059
4	<<ԷՄԹԻԵՅ>> ՍՊԸ	ք.Երևան, Էրեբունի, Վարդաշեն 4փ., 42 տ.	00497639
5	<<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ	ք.Սևան, Բաբաջանյան 1	08607069
6	<<Վանդաժի>> ՍՊԸ	ք.Արտաշատ, Աթարբեկյան 133	04221665
7	<<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ և <<ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ>> ՍՊԸ կոնսորցիում	ք.Երևան, Ն.Չարբախ 11փ. տ.2 Արարատի մարզ, գ.Կանաչուտ, Այվազովսկու 6	02294286 04223034
8	<<ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ	ք.Չարենցավան, 4-րդ թղմ 9-րդ շենք բն 5	03021795
9	<<Բերդուս>> ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գյուղ Գանձակ, Հ.Հակոբյանի փ., 1-ին նրբանցք, տուն 15	

5.Տվյալներ հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Մասնակիցների ներկայացրած հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են.

***5.1** անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, այն է.*

5.1.1 <<***ԳԱՄՇԻՆ***>> ՍՊԸ-ի հայտում կցված չէ մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

5.1.2 <<***ԷՄԹԻԵՅ***>> ՍՊԸ-ի հայտում կցված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3, ինչպես նաև հավելված 1-ում էլեկտրոնային ստորագրությունը դրված է առանձին՝ մաքուր էջի վրա:

5.1.3 <<***Բերդուս***>> ՍՊԸ-ի հայտում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում /Հավելված 1.3/ էլեկտրոնային ստորագրությունը դրված է առանձին՝ մաքուր էջի վրա, ինչպես նաև սխալ է լրացված ընկերության անվանումը /կետ2.1.1/, սխալ ձևաչափով՝ հրավերին կցված ձևին ոչ համապատասխան ձևով է ներկայացված հավելված 1-ը:

6. <<ԿՈՏ-ԳՀԱՇՁԲ-2022/4>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն որոշեց.

***6.1** ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի և հրավերի 1-ին մասի 8.9 կետի համաձայն մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ ծանուցմամբ առաջարկելով մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը /մինչև նոյեմբերի 03-ի ժամը 18^{00} / շտկել անհամապատասխանությունը:*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

ք. Հրազդան *04.11.2022թ.* *ժամը 11^{00}*

7. Անհամապատասխանությունների շտկման մասին.

Սահմանված ժամկետում բոլոր մասնակիցները գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

8.Մասնակիցների առաջարկած գնային առաջարկները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	<<ՔՐՈՍՍ>> ՍՊԸ	40116500	8023300	48139800
	<<ԱՎԱԳ-ՇԻՆ1>> ՍՊԸ	40065000	8013000	48078000
	<<Քոնստրաքշն Գրուպ>> ՍՊԸ	40100000	8020000	48120000
	<<ԷՄԹԻԵՅ>> ՍՊԸ	40121730	8024346	48146076
	<<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ	41000000	8200000	49200000
	<<Վանդաժի>> ՍՊԸ	40108000	8021600	48129600
	<<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ և <<ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ>> ՍՊԸ կոնսորցիում	40000000	8000000	48000000
	<<ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ	40124586	8024917	48149503
	<<Բերդուս>> ՍՊԸ	39962054	7992411	47954465

9. <<ԿՈՏ-ԳՀԱՇՁԲ-2022/4>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն որոշեց.

9.1 Մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

9.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և հրավերի 1-ին մասի 8.7 կետի բ. ենթակետի համաձայն կասեցնել նիստը և ծանուցել բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին: Բանակցությունները /տևողությունը 10ր/ տեղի կունենան Կոտայքի մարզպետարանում՝ ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, 4-րդ հարկ հասցեում սույն թվականի նոյեմբերի 09-ին, ժամը 11^{00}ին: Բանակցությունները վարվում են մասնակիցների կամ վերջիններիս լիազոր անձանց հետ /անձնագրի և լիազորագրի պարտադիր առկայություն/: Մասնակիցները, չներկայանալու դեպքում, կարող են նոր գնային առաջարկ ներկայացնել մինչև բանակցությունների ավարտը նաև գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

ք. Հրազդան *09.11.2022թ. ժամը 11^{00}*

10. Բանակցությունների մասին

10.1 Բանակցություններին մասնակցել են <<ԱՎԱԳ-ՇԻՆ1>> ՍՊԸ տնօրեն Հ.Ավագյանը, << Վանդաժի>> ՍՊԸ տնօրեն Տ.Վիրաբյանը, <<ԷՄԹԻԵՅ>> ՍՊԸ տնօրեն Տ.Մելիքյանը, << Բերդուս>> ՍՊԸ տնօրեն Ա.Խաչատրյանը, <<ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ լիազորված անձ Գ.Պրազյանը և <<ՔՐՈՍՍ>> ՍՊԸ լիազորված անձ Ա.Հակոբյանը. մասնակիցները ներկայացել են անձնագրով և լիզորագրերով: Բանակցությունների արդյունքում <<ԱՎԱԳ-ՇԻՆ1>> ՍՊԸ-ի և <<ՔՐՈՍՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվեցին նոր գնային առաջարկներ.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	<<ՔՐՈՍՍ>> ՍՊԸ	***36583333.33***	***7316666.67***	***43900000***
	<<ԱՎԱԳ-ՇԻՆ1>> ՍՊԸ	36666666.67	7333333.33	44000000

11. <<ԿՈՏ-ԳՀԱՇՁԲ-2022/4>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն որոշեց.

11.1 Ընտրված մասնակից ճանաչել <<ՔՐՈՍՍ>> ՍՊԸ-ին:

11.2 *Կիրառել անգործության ժամկետ:* Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «10» օրացուցային օր է:

11.3 Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ ---------- ***Ս.Բաղդասարյան***

անդամներ՝

---------- ***Կ.Հունանյան***

---------- ***Հ.Վարդանյան***

---------- ***Ս.Բաղդասարյան***

---------- ***Է.Գևորգյան***

քարտուղար՝ ---------- ***Հ.Հակոբյան***